ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր կարդինալ Աղաջանյանը եկած է Ամերիկա, Պոստոնի արքեպիսկոպոս Քըշինկի հրավերով։ Ան հոս մնալու է երեք ամիս, այցելելով հայ կաթոլիկ համայնքները։

Եթե այս երկրին մեջ բնակող սակավաթիվ հայ կաթոլիկները բավարարություն կգտնեն կարդինալը տեսնելով, այդ իրենց գիտնալիքն է։ Նմանապես, եթե կաթոլիկ նվիրապետության մեկ անդամի հրավերով ուրիշ մը կճամբորդե, այդ ալ սովորաբար մեզ չի հետաքրքրեր։ Զոր օրինակ, Նյու-Յորքի Ֆրենղիս կարդինալ Սփելմանը այս պահուն գացած է Արգենտինա, մի ինչ որ արարողության մասնակցելու, բայց այս միջանկյալ հիշատակումեն զատ, ատով զբաղելու կարիք չենք զգացած։

Կարդինալ Աղաջանյանի պարագան տարբեր է, քանի որ ան հայկական ծագում ունի, և իր դաշտը հայկական իրականությունն է։

Հոս գալեն առաջ, կարդինալ Աղաջանյանը այցելեց Ֆրանսա։ Իր հոն երթալը տխուր անդրադարձում ունեցավ ֆրանսահայ գաղութին վրա։ Ոմանց բարեմիտ կարծիքով, պարզ «զուգադիպություն» էր, որ նույն ատենները շարք մը ցավալի իրողություններ տեղի ունեցան հոն։ Կրնա ըլլալ։ Բայց արտակարգ «զուգադիպություն» էր, որ ճիշտ այդ օրերուն՝ Ֆրանսայի մեջ՝

ա) Հայաստանյայց Եկեղեցիի Ֆրանսայի թեմը էջմիածինեն անջատելու ջանքերը սաստկացան։

բ) Հոգաբարձությունները բռնի հրաժարեցնելու փորձեր եղան, որպեսզի անոնց տեղը անցնին էջմիածնի և Հայաստանի թշնամի տարրեր։

գ) Առաջնորդ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանը հալածվեցավ, երկրեն արտաքսման հրաման ստացավ և հանկարծամահ եղավ։

դ) «Ազատ խոսք»ը կառավարության կողմե խափանվեցավ, որովհետև խաղաղությունը կջատագովեր, Սովետ Հայաստանի իրականությունը կծանոթացներ, և էջմիածնի հեղինակությունը պահել կուզեր։

ե) Դաշնակ տեռորիստները ավելի սանձարձակ դարձան։

զ) Հայոց դեմ իշխանության կողմե զսպիչ միջոցներ ավելցան։

Ֆրանսահայ գաղութի ներկա կացությունը վերհիշել կուտա Լեհաստանի և մոտակա երկիրներու հոծ և բարեկեցիկ հայկական համայնքները, որոնք երկար ատեն պահեցին իրենց ինքնությունը, Հայրենիքի սերը, հայերեն լեզուն և Ազգային Եկեղեցին։ Անհանդուրժող Պապական Եկեղեցին ջանաց ամեն կերպով լուծել այդ գաղութները և մանավանդ բռնի ուժի միջոցով, ան գրավեց հայկական եկեղեցիները և արգիլեց հայերեն լեզուն։

Թերևս հուսացողներ ըլլան, որ Ֆրանսայի մեջ պատահած «զուգադիպություն»ը Ամերիկայի մեջ կրկնվի։ Բայց անոնք գիտնալու են, որ Ֆրանսայի մեջ տարված «հաղթանակ»ը խաբուսիկ և ժամանակավոր է և հուսախաբ պիտի ըլլան հոս անոր կրկնությունն ակնկալելով։

Կարդինալի հոս ժամանումը կպարտադրե խորհրդածել իր անձին և իր ներկայացուցած հաստատության կապված հարցերու վրա։

Նախ՝ ի՞նչպես եղավ, որ Գրիգոր Աղաջանյանը կարդինալ նշանակվեցավ։

Փաստարկողներ կան, թե ան այնքան

հմուտ ու իմաստուն էր, որ Պապը ստիպվեցավ արժանիքը ճանչնալ և կարդինալություն շնորհել իրեն։ Բայց սա սխալ ենթադրություն է։ Կաթոլիկ Եկեղեցին միշտ առաջնորդված է քաղաքական նկատումներով, ուժի և արդյունքի հաշիվներով։ Ան կարդինալ չըներ անձ մը, եթե անոր ետին չկան առնվազն հինգ միլիոն կաթոլիկ հավատացյալներ, և կամ թե որոշ ակնկալություններ չունի անկե։

Գրիգոր Աղաջանյանը այս ստորոգելիներեն առաջինը— ուժը չուներ, քանի որ ոչ ավելի քան քառասուն հազար պապադական կա հայերուն մեջ։ Ուրեմն, Վատիկանը արդյունք մը կակնկալեր՝ անոր նվիրելով կարդինալի կարմիր գլխարկը։

Այդ ակնկալության մեկ մասն էր հայոց հայրենահավաքին վնասելը։ Գրիգոր Աղաջանյանը՝ կարդինալի գլխարկը գլխին վրա դնելով, այդ ուղղությամբ իր կարելին ըրավ, բայց հայրենադարձ հայությունը իր խորհուրդին չանսաց։

Վատիկանը տակավին ուրիշ բան կակընկալեր իր հայախոս ծիրանավորեն։ Դարեր շարունակ Հռոմը ջանացած էր պառակտել և իրեն հպատակեցնել Հայաստանյայց Եկեղեցին, բայց չէր հաջողած։ Բոլորված իր Ազգային Եկեղեցիին շուրջ, հայ ժողովուրդը երբեք նպատակ չուներ խոնարհելու օտար կրոնապետի մը առջև, և ընդունելու անոր ազգամերժ վարդապետությունը։ Միայն դույզն թվով դավանափոխներ հարեցան Վատիկանի։ Իսկ ներկայիս, Հռոմը կհուսա իրագործել՝ իրմե միշտ խուսափող այդ նպատակը, օգտվելով ռազմատենչ մթնոլորտեն։

Բայց Պապը տակավին ավելի մեծ նպատակ ունի։ Ան կուզե իրեն հպատակեցնել, հայկականեն զատ, Մերձավոր Արևելքի մյուս եկեղեցիները (Ղպտի, Ասորի, Եթովպական և այլն), որոնք քրիստոնեության սկզբնական շրջանեն ի վեր անկախ գոյություն պահած են։ Այս կացության բանալին Հայաստանյայց Եկեղեցին է։ Եթե այս հաղթահարվի, մյուսները հաղթահարելը մեծապես կդյուրանա։ Ահա Գրիգոր Աղաջանյանեն իբրև կարդինալ ակնկալված արդյունքը։

Առ այդ, կարդինալ Աղաջանյան կհեղհեղե «հերձվածողներու վերադարձը» կոչված Պապականության տաղտկալի հանկերգը, ըստ որում ինքն է միայն ճշմարիտ հավատքի վրա հիմնված իսկական եկեղեցին, իսկ մյուսները՝ սխալի մեջ թավալող «հերձվածողներ»։

Դավանանքի խնդիրները մեր նկատառության սահմանեն դուրս են, և մենք վեճի չենք բռնվիր աստվածաբանության մասին։ Բայց այս առթիվ ի պատասխան այդ հանկերգին, պարտավոր կզգանք ըսելու կարդինալ Աղաջանյանին և Պապականության ուրիշ հայախոս մունետիկներու՝ «Պարապ խոսք և փուճ փաստարկություն»։

Եթե հերձվածող մը կա, եթե քրիստոնեության ուսմունքը խեղաթյուրող մը կա, ան ալ Կաթոլիկ Եկեղեցին է, որու նվիրապետության փառամոլությունն ու ընչաքաղցությունը չափ ու սահման ունեցած չեն, դարերու տևողության, մինչև մեր օրերը։

Պատմականորեն անճիշտ, անհիմն ու սնանկ է Կաթոլիկ Եկեղեցվո այն հավակնությունը, թե ինքն է ուղղափառ և վավերական Քրիստոնեական Եկեղեցին։ Հայաստանյայց Եկեղեցին, զոր օրինակ, առնվազն նույնքան իրավունք ունի ինքզինք նկատելու ուղղափառ, վավերական, առաքելական և ոչ հերձվածող, որքան ուրիշ որևէ եկեղեցի։

Հայ ժողովուրդը, անցյալ հազար տարիներուն, գիտցած է թափանցել լատին եկեղեցիներու մանվածապատ մեքենայություններեն ներս, դժվարին պայքար է մղած անոնց դեմ, և էականին մեջ պարտության է մատնած զանոնք, հավատարիմ մնալով իր Հայրենիքին և իր ավանդական Եկեղեցվույն։

Ներկայիս մեր վերածնող Հայրենիքի փառահեղ իրականության ի տես մանավանդ, հայ ժողովուրդը դարձյալ պիտի ճանչնա կարդինալ Աղաջանյաններուն արտասանած մեղրածորան բառերուն մեջ թաքնված ազգակործան և եկեղեցակործան թույնը, և դարձյալ պիտի գիտնա պարտության մատնել Պապականության նպատակները։

(«ԼՐԱԲԵՐ», 27 նոյեմբերի, 1951 թ.)։